ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ Շիրակի մարզի «Հայկավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2019 թվականի սեպտեմբերի 18-ի նիստի թիվ 36 արձանագրությունից.

Օրակարգում. 1. ՀՀ Շիրակի մարզի «Հայկավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Խորհրդի նախագահի ընտրություն:

2. ՀՀ Շիրակի մարզի «Հայկավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթի հայտարարման մասին:

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը» հաստատելու մասին ՀՀ կառավարության 04.03.2010թ. թիվ 319-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված դրույթները՝ ՀՀ Շիրակի մարզի «Հայկավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայտարարել մրցույթ ՀՀ Շիրակի մարզի «Հայկավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար:
2. Մրցույթն անցկացնել ՀՀ Շիրակի մարզի «Հայկավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքում՝ 2019 թվականի նոյեմբերի 12-ին, ժամը 14^{00}- ին :
3. Մրցույթի մասնակիցների գործերն ընդունել ՀՀ Շիրակի մարզի Հայկավանի միջնակարգ դպրոցում՝ մրցույթի մասին հայտարարության երկրորդ հրապարակման օրվանից 30 օրվա ընթացքում՝ 05.10.2019թ.– 03.11.2019թ. ժամանակահատվածում՝ ժամը 10^{00}-15^{00}, բացի ոչ աշխատանքային օրերից:
4. Մրցույթ հայտարարելու մասին կառավարման խորհրդի որոշումը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետին:
5. Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելուց առնվազն երկու աշխատանքային օր առաջ տեղեկատվությունը տրամադրել կրթության ոլորտի պետական լիազորված մարմնին:
6. ԶԼՄ-ներում մրցույթ հայտարարելու մասին առաջին հայտարարությունը հրապարակել 30.09.2019թ. -ին, երկրորդը՝ 05.10.2019թ.-ին:
7. Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումների /գործերի/ ընդունման պատասխանատվությունը դնել խորհրդի քարտուղար Մ. Ասատրյանի վրա:

ՀՀ Շիրակի մարզի «Հայկավանի միջնակարգ դպրոց»
ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նախագահ **Շ. Շաքարյանց**

19.09.2019թ.